



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՔՈՐՈՆԱՅԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՅԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

**ԵԿԷՔ, ԼՈՒՄՈՅ ԽՈՐԱՆԸ ՇԻՆԵՆՔ ԵՒ
 ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ**

ՍձԾ, ձԾԾ՝ 2Ե2ՁՍձԾ, ԵԾ՝ 2¼2ՍԱ

Տարի մը առաջ էր, որ Քորոնա շրջանի Ռիվըրսայտ գաւառի հայ համայնքի անդամներէն ոմանք քով քովի գալով, քաղցր գաղափարը յղացան անմասն չմնալ Հայ Եկեղեցւոյ հոգեւոր մատակարարումէն, ուստի դիմելով Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգային Իշխանութեան Խառն Ժողովին եւ ստանալով Սրբազան Հօր օրհնութիւնը, կազմեցին ծխական յանձնախումբ մը: Սրբազան Հօր բարձր կարգադրութեամբ, նախապէս շրջանի հոգեւոր մատակարար նշանակուած էր Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Հրանդ Քիւնյ. Երեցեան, իսկ Թեմս երկու միաբան հայրերով օժտուելէ ետք, այժմ շրջանի հոգեւոր մատակարարութիւնը ստանձնած են Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Կիրակի, 18 Յունիս 2006-ին, Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Ս. եւ անմահ պատարագ մատուցեց Քորոնայի Ռիվըրսայտ գաւառի Ս. Էնթընի եւ Ս. Ապանուպ դըպտի քոյր եկեղեցւոյ մէջ, ծխական համայնքին հիմնադրութեան առաջին տարեդարձին առիթով: Ս. Խորանին սպասարկեց Հայր Պարթեւ, իսկ սարկաւազական ու դպրաց երգեցողութիւնը կատարեցին շրջանի, ինչպէս նաեւ Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եւ Հովիվուտի Ս. Կարապետ եկեղեցիներու սարկաւազներ ու դպրաց դասի անդամները:

«Հրաշափառ»ի երգեցողութեամբ թափօրով մուտք գործեց Առաջնորդ Սրբազանը: Ուրախալի էր տեսնել շրջանիս մանուկները, որոնք բժախնդրութեամբ արտասանեցին «Աղաղակեցէք» սաղմոսը եւ կատարեցին մոմակրութիւն՝ յընթացս Ս. պատարագին:

Իր քարոզ-պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց ամենակալին Աստուծոյ, որ իր խնամքին տակ կը պահէ ծխական համայնքս, կ'աճեցնէ հոգեւորապէս, կ'ուճեցնէ թիւով, եւ կը պահպանէ երեւելի ու աներեւոյթ յարձակումներէ եւ փորձանքներէ: Աստուած սեր է եւ մենք իր սիրոյն արդիւնքն ենք, ըսաւ Սրբազանը, ուստի մենք ալ խոր սեր եւ ամուր կապուածութիւն պէտք է ունենանք Աստուծոյ եւ մեր նմանին հանդէպ: Սրբազան Հայրը նշեց, որ այսօր տօնն է «Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի», հայ առաջին եկեղեցւոյ՝ Ս. Էջմիածնի հիմնադրութեան, իսկ երէկ մեր հաւատոյ հայր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապէս ելլելուն տօնը: Ինչպէս Հոգեգալստեան տօնը

քրիստոնեական եկեղեցւոյ, այլ խօսքով՝ բոլոր քրիստոնեաներուն տօնն է, այնպէս ալ Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման տօնը՝ հայ եկեղեցւոյ հաստատման տօնն է, շէշտեց Սրբազան Յայրը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապին մէջ բանտարկուած մնաց աւելի քան 13 տարի, չարչարուեցաւ, տառապեցաւ, սակայն երբեք իր հաւատքը չկորսնցուց, այլ զայն միշտ վառ պահեց, որովհետեւ ան գիտէր, որ այդ բոլորը նպատակի համար պիտի ծառայէին, եւ երբ օրը հասաւ՝ Քրիստոսի լոյսը տարածեց Յայաստան աշխարհին մէջ: Աստուածային անմիջական միջամտութեամբ հայ ժողովուրդը քրիստոնեայ դարձաւ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապին մէջ ինքնիրեն համար չաղօթեց, իր հանգստեան համար չաղերսեց, այլ աղօթեց հայ ազգին համար, երկնեց եւ երկունքով ծնաւ Յայոց Յաւատքը: Ս. Գրիգոր տեսիլքի մէջ տեսաւ Քրիստոսը, որ երկնքէն երկիր կ'իջներ եւ իր ձեռքին մէջ բռնած ուռնակով Մայր Տաճարի տեղն ու ձեռը կը գծէր: Այս տեղէն սկսաւ հայ եկեղեցին, քրիստոսահիմն կառոյցով եւ ճարտարապետութեամբ, ապա տարածուեցաւ աշխարհով մէկ, կառուցուեցան բազմաթիւ եկեղեցիներ, տարբեր անուններով, սակայն նոյն հաւատքով, նոյն տեսիլքով: Յայ եկեղեցին եղաւ տեսիլքի արդիւնք եւ գործնականացուեցաւ ու կառուցուեցաւ հաւատքով, բոլորին համատեղ աշխատանքով ու ջանքով. թագաւոր թէ իշխան, թագուհի թէ իշխանուհի, կրօնաւոր թէ շինական, բոլորը ձեռք-ձեռքի տուին, քար կրեցին, քար տաշեցին, աքրուցեցին եւ հաւատքով շինեցին լոյսի խորանը, եւ եկեղեցին ճանչցան իբրեւ իբրեւ Մայր, իսկ Ս. Աւետարանը իբրեւ Յայր: Այսօր մենք ալ հրաւեր ունինք առաքիւնի գործերով մեր համայնքի կեանքը առաջ տանելու, պատգամեց Սրբազան Յայրը: Տեսիլքը վա՛ռ պահենք եւ գործի վերածենք, ձեռք-ձեռքի տանք եւ շէն պահենք եկեղեցին, մեր ծովիսը: Մեր հայրերուն նման լոյսի խորան շինենք, մեր հոգեւոր կեանքը կազմաւորենք, մեր հոգիներուն մէջ Աստուծոյ խորան շինենք: Այսօր նաեւ աշխարհը կը նշէ հայրերու տօնը: Իսկ մենք կը նշենք մեր հոգեւոր հօր, հոգիներու լուսաւորիչ մեծ վկային՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնը, այն բարի հովիւին՝ որ մեզ Քրիստոսի առաջնորդեց, եւ Աստուածային լոյսով լուսաւորեց Յայաստան աշխարհն ու հայ ժողովուրդը: Ապա, իր քարոզի աւարտին, Սրբազանը աղօթք վերառաքելով ըսաւ. «Տէ՛ր, Յայր ամենեցուն, լսէ՛ մեր բոլորին աղօթքները, շէն ու պայծառ պահէ մեր ընտանիքները, լոյսդ անպակաս ըրէ մեր յարկերուն վրայէն: Պայծառացուր հայ եկեղեցին եւ բոլորս պահէ քու անսահման ողորմութեանդ ու սիրոյդ մէջ. ամէն»:

Ս. Պատարագի պսակումը եղաւ հաւատացեալ հայորդիներու Քրիստոսի կենարար ու սրբարար մարմինով ու արիւնով հաղորդուիլը: Պատարագի աւարտին, ներկաները մեծ խանդավառութեամբ ու ապրումով երգեցին «Կիլիկիա» մաղթերգը եւ Յայաստանի հիմներգը:

Եկեղեցւոյս օժանդակ տիկանանց յանձնախումբին կողմէ սիրոյ ճաշ պատրաստուած էր եկեղեցւոյ կողքի սրահին մէջ: Սրահը լեցուն էր բազմութեամբ: Առաջնորդ Սրբազան Յօր աղօթքով օրհնուեցան սեղանները: Սրբազանին սեղանակից էին շրջանիս ծխական խորհուրդի անդամները, ինչպէս նաեւ Օրէնճ Զաունթիի եւ Զոլորատօ Նահանգի Տենվըր քաղաքի հոգաբարձութեանց ատենապետները, յանձնիս՝ Տիար Նազարէթ Տիշոյեանի եւ Տիար Լեօ Տօնեանի, որոնք այս առիթով նաեւ արտասանեցին սրտաբուխ խօսքեր եւ քաջալերելու համար շրջանիս ծխական գաղութը, իրենց եկեղեցիներուն անունով կատարեցին նուիրատուութիւն: Բարի գալստեան եւ շնորհակալական խօսք արտասանեց նաեւ ծխական յանձնախումբին ատենապետուհին՝ Տիկին Անի Պարմաքսեան: Օրուան սեղանավարութիւնը կատարեց Յայր Պարթեւ, որ բոլորին անունով շնորհաւորեց

Թեմիս հոգեւոր Առաջնորդը՝ հայրերու տօնին առիթով, եւ յիշեց, որ ասկէ երեսնամեակ մը առաջ, ճիշդ այսօր, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Աստուծոյ Ս. Խորանին դիմաց ծունկի եկաւ եւ ուխտեց իր ամբողջ կեանքը նուիրել եկեղեցւոյ եւ ազգի ծառայութեանը: Իսկ այդ երեսուն տարիներու ծառայութեան աւելի քան քսան տարին Սրբազանը Արեւմտեան Թեմէս ներս ծառայեց որպէս հոգեւոր հովիւ եւ Առաջնորդական փոխանորդ, իսկ վերջին տասը տարին՝ որպէս արժանաւոր Առաջնորդ: Ուստի Հայր Սուրբը քաջառողջութիւն, երկար եւ բեղուն կեանք մաղթեց Սրբազանին, մաղթելով նաեւ, որ ընդերկար գահակալութիւն եւ արդիւնաշատ առաքելութիւն ունենայ Թեմէս ներս: Այս առթիւ երգեր ձօնուեցան Սրբազան Հօր եւ բոլոր հայրերուն, կատարողութեամբ Հայր Պարթեւին, Վարդգէս Տիշոյեանին եւ Սուրեն Հագարեանին:

Խանդավառ այս մթնոլորտը աւելի՛ ջերմացաւ, երբ հայորդիներ իրենց նուիրատուութիւններով մաս եւ բաժին բերին սոյն սիրոյ սեղանին:

Հուսկ բանքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ բարձր գնահատեց ստեղծուած այս խանդավառութիւնը, ըսելով. «Մի՛ սպասէք որ իւրաքանչիւրիդ առանձին-առանձին դիմենք ծրագիրներ քաջալերելու համար, այլ դուք գործօն ներկայութիւն եղէք եւ շէնցուցէք հաւաքական ձեր կեանքը, գործնական մասնակցութիւն բերելով այս շրջանի հոգեւոր եւ ազգային կեանքին»: Տօնական այս մթնոլորտը իր զենիթին հասաւ Առաջնորդ սրբազան Հօր «Պահպանիչ»ով, որմէ ետք ներկաները իրենց տուները մեկնեցան՝ հոգեկան խոր բաւարարութեամբ:

DURING HIS SERMON AT HOLY MASS ON THE FIRST ANNIVERSARY OF THE CORONA PARISH

COME, LET US BUILD THE ALTAR OF LIGHT AND BRIGHTEN OUR SPIRITUAL LIVES

Preached His Eminence the Prelate

On Sunday June 18, 2006, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate conducted Holy Mass at the Armenian Apostolic Church of Corona, Riverside County, on the occasion of the first anniversary of the establishment of the parish community. Holy Mass took place at St. Anthony and St. Abanoub Coptic Orthodox Church. Very Rev. Fr. Barthev Gulumian assisted at the altar. Also participating in the Holy Mass were deacons and choir members of the local parish as well as from Forty Martyrs Church of Orange County and St. Garabed Church of Hollywood.

The procession entered the church with the singing of “Hrashapar” as youngsters carried candles and recited a psalm.

In his sermon, the Prelate first gave glory and thanks to Almighty God for looking over the parish community and keeping them away from harm. God is love and we are the result of that love, therefore we must have that same love and bond toward God and toward each other, said the Prelate. “Let us build the Altar of light and brighten our

spiritual lives,” invited the Prelate and concluded by asking the Lord to accept our prayers, to keep our families prosperous, to enlighten the Armenian Church, and to keep us all in His mercy and love.

Following Mass and the offering of Holy Communion, the parishioners sang “Giligia” and “Mer Hayrenik” along with the clergy.

After church services, the parishioners headed to the church hall where the Ladies Auxiliary had organized a reception. Among the guests were Nazareth Dishoian, Chair of the Forty Martyrs Board of Trustees, and Leo Donian, Chair of the Colorado parish Board of Trustees, who delivered remarks and made donations on behalf of their parishes. Various donations were also made throughout the reception. Following welcoming remarks by parish Chairlady Ani Barmaksyan, Very Rev. Fr. Barthev Gulumian made remarks in which he congratulated the Prelate on the occasion of Father’s Day, reminding the faithful that on this very day thirty years ago, the Prelate vowed to devote his life to serving the Armenian church and people. On this occasion, Very Rev. Fr. Barthev Gulumian, Vartkes Dishoian, and Suren Hazarian sang songs for the Prelate and for all fathers. In his concluding remarks, the Prelate commended the enthusiasm of the parish community, offered them guidance and encouraged them to be active in the parish and to work together to brighten their parish and community. The reception concluded with the “Bahbanich” prayer by the Prelate.